«Lragir.am» ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑԻ 24.04.2012 Թ.
«ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԹԱՆԱՔԸ ՇՈՒՏ ՉՈՐԱՑՈՂ Է»
ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հրապարակման մեջ նշվում է, թե, , լավատեղյակ աղբյուրներից հայտնի է դարձել, որ ԱԺ ընտրությունների օրը ՀՀ քաղաքացիների անձնագրերում դրվելիք կնիքի թանաքը, իբր, լինելու է 2-3 ժամ անց օքսիդացող, ինչը հնարավորություն կընձեռի կրկնակի քվեարկության իրականացման համար:

Այս կապակցությամբ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը պաշտոնապես հայտարարում է, որ նշված տեղեկությունները ստահոդ են և չեն համապատասխանում իրականությանը: Անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքման համար տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացվելիք նյութի մատակարարը անգլիական հեղինակավոր <<Լենթրեյդ Գլոբալ Սափլայզ>> ընկերությանն է: Նյութն օգտագործելուց հետո պահպանվում է առնվազն 12 ժամ, իսկ հետո՝ անհետանում:

Հրապարակման հեղինակի և <<լավատեղյակ աղբյուրների>> կասկածները փարատելու նպատակով վերջիններս անձը հաստատող փաստաթղթով հրավիրվում են ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով դրոշմակնքման համար նյութի փորձարկումն իրականացնելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության

կենտրոնական ընտրական հանձնաժողով